

Միբեյի մեծամորցի ուսանողներ,
ջերմորեն շնորհավորում եմ միջազգային օրվա կապակցությամբ: Ուսանողական տարիները յուրաքանչյուրիս համար հիշվում է, որպես կյանքի լավագույն շրջափուլերից մեկը: Այդ ընթացքում ենք ձեռք բերում գիտելիքներ, հետագա կյանքի ընկերներ, սիրահարվում, հիասթափվում ու նորից ոտքի կանգնում՝ նախանշելով մեր ապագան:

Ընդամենը օրեր առաջ քվերակության արդյունքում Մեծամորը ճանաչվեց 2023թ «Երիտասարդական մայրաքաղաք»: Իսկ ինչպես գիտենք, երիտասարդության հիմնական կորիզը կազմում են ուսանողները, որոնք իրենց հերթին հանդիսանում են պետության շարժիչ ուժը:

Մենք էլ մեր հերթին կատարում ենք առավելագույնը, որպեսզի հնարավորություն ստեղծենք ուսանողության համար ստանալ գիտելիքներ, որոնք կձառայեցնեն մեր պետության հզորացմանը:

Իսկ մենք մեր հերթին, շարունակելով ուշադրության կենտրոնում ենք պահելու երիտասարդների, ուսանողների հարցերի լուծումները գտնելու

հաստատակամությունը՝ աջակցելով նրանց, շահեկան պայմանների ստեղծմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով օրվա առթիվ մաղթում եմ բոլորիս բարեկեցությունն ու խաղաղ երկինք: